ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻՆ

13.04.2023 19:34

Հայաստանի ֆրանսիական համալսարանում տեղի ունեցավ դատախաղ-մրցույթ:

Մրցույթը կազմակերպել էր ՀՖՀՀ-ն՝ ՀՀ փաստաբանների պալատի, Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների պալատին կից գործող Մարդու իրավունքների ինստիտուտի և Հայաստանի Սենգորի անվան ֆրանկոֆոնիայի ամբիոնի հետ համագործակցությամբ:

Դատախաղի թեման էր՝ «Խոսքի ազատություն և ատելության խոսք» :

Նշենք, որ դատախաղի մասնակիցներից երեքը նաև Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներ են:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Իր խոսքում նա ընդգծեց, որ տպավորված է մասնակիցների բարձր առաջադիմությամբ ու ակտիվությամբ, ինչպես նաև կարևորեց ուսանողների միաժամանակ երկու ուսումնական հաստատությունում սովորելու պատասխանատու քայլը:

Ֆրանսիացի գործընկեր Ամին Ֆարաժը ևս իր ելույթում բարձր գնահատեց հայ ուսանողների կրթական մակարդակը:

Մրցույթի ավարտին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի պրոռեկտոր Մանե Կարապետյանը մրցանակներ և հավաստագրեր շնորհեցին մրցույթի մասնակիցներին:







Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })